

## Վ. Ա. ԺՈՒԿՈՎՍԿԻ

Պրօժ. Ա. Արխանցելակու

Վասիլի Անդրէսի Ժուկովսկին ոռուս երևելի բանաստեղծ-ներից մէկն է: Նա ծնուել է 1783 թ. յունուարի 29-ին Տու-լայի նահանգի Բելկ քաղաքից Յ. կ. հեռու՝ Միշենսկու գիւղում: Նրա հայրը այդ գիւղի ծերունի կալուածատէր Աֆանասիյ Խ-ւանովիչ Բունինն էր, իսկ մայրը՝ մի գերի ընկած թուրք աղ-ջիկ, իր կնքահայր Անդրէյ Գրիգորևիչ Ժուկովսկի Ժուկովսկուց, որ մի քա-ւոր կալուածատէր էր և բունինների բարեկամը, նորածինն ստացաւ իր ազգանունը: Ապագայ բանաստեղծի ծնուելուց քիչ առաջ Բունինի ընտանիքը սոսկալի վշտեր ունեցաւ. Կարճ ժամանակուայ ընթացքում մշտանց ետերից մեռան այդ տան 11 որդիներից 6-ը, որոց թւում նաև ընտանիքի միակ արու զա-ւակը, որ Լայպցիգի ուսանող էր: Վշտարեկ տիկին Բունինան վճռեց նորածին ընտանիքի մէջ առնել ի յիշտառակ հանգուցեալ որդու և հարազատ զաւակի նման դաստիարակել նրան: Երե-խան շուտով ամբողջ ընտանիքի սիրելին դարձաւ: Փոքրիկի սկզբնական կրթութիւնը լաւ չէր գնում, 11 տարեկան հասա-կում նրան արձտկեցին Տուլայի Ժողովրդական ուսումնարանից հանրնունակութեան համար: Այդ դէպքից յետոյ երեխան մնաց Տուլայում Բունինի աղջիկներից մէկի և միանգամայն իր կնքամօր տիկին Խչկովայի ընտանիքում: Այստեղ նրա ընկեր-ները բացառապէս աղջիկներ էին. այս հանգամանքը չէր կա-րող առանց ազդեցութեան մնալ և աւելի ևս չզարդացնել նը-րա ընաւորութեան բնածին մնդմութիւնը: Խչկովայի տունը քաղաքի մտաւորական կեանքի կենդրունն էր: Կրթուած ու սի-րալիր տանտիկնոջ շուրջը հաւաքուել էին մի խումբ մարդիկ, որոնք ամբողջովին իրանց նուիրել էին գրական ու երաժշտա-կան շահերին: 14 տարեկան հասակում Ժուկովսկին դուրս գտ-

լով այս շրջանից մտաւ Մոսկուայի համալսարանական պանսիօնը՝ աղնուականների համար, ուր և ուսաւ գ տարի։ Պանսիօնն ընդարձակ ծանօթութիւններ չէր տալիս, բայց աշակերտները յանախ հաւաքւում էին դասառունների առաջնորդութեամբ կարդալու իրանց դրական փորձերը։ Այդ փորձերից լաւագոյններն անմիջապէս տպւում էին ժամանակի պարբերականներում։ Պանսիօնում եղած երկրորդ տարին Ֆուկովսկու և իր ընկերների ջանքով, որոնցից էին Բլուգովը, Դաշկովը, Ռևարովը, Տուրդենս Ալեքսանդրը և Անդրէյը, առաջ եկաւ մի առանձին գրական ընկերութիւն «Ժողով» անունով, որ ունէր պաշտօնապէս հաստատուած կանոնադրութիւն։ Ընկերութեան առաջին նախագահը Ժիրիմի մօտ» (1797 թ.), որ նա գրեց տիկին Իւշկովյի մահուան լուրն առնելու ազդեցութեան տակի։ «Ես պարզորէն զգացի—ասում է 14 տարեկան հեղինակը—լուսնի տակ եղած ամեն ինչի ոչնչութիւնը. տիեզերքն աչքիս դադաղ երեւաց... Մահ! անազորոյն դու մահ! Երբ պիտի յոդինի արդեօք քո ձեռքը, երբ պիտի գոլանայ սոսկալի մանդաղիդ սուր բերանը... Զորս տարուայ ընթացքում՝ 1797—1801, որ նա ապրեց պանսիօնում, լոյս տեսան նրա «Մայիսեան առաւօտը», «Առաքինութիւն», «Խաղաղութիւն», «Ճիրուլին», «Առ մարդն» և ուրիշ ոտանաւորները։ Այս ամենի մէջ գերակշռում են մելամադիկ ձայները։ Պատանի բանաստեղծին ապլշեցնում է կեանքի անհաստատութիւնը, ամեն երկաւոր բանի վաղանցուկ լինելը, կեանքը նրան թւում է տանջանքների և արցունքի մի անդունդ, «Բաղդաւոր է, ասում է նա, ով հասել է խաղաղ ափին ու մշտնջենական քնած է քնով։ . . . Բանաստեղծի մելամադիկ տրամադրութիւնն ամենից առաջ կապ ունէր ժամանակի գրական ճաշակի հետ։ Նրա առաջին գործերն երեացին այն ժամանակ, երբ սուս ընթերցողը հիանում էր Կարամզինի «Թշուառ Լիգան» (1792) ու նրա անթիւ նմանութիւնները կարդալով։ Բայց մոդայով ամեն ինչ այս դէպքում չի կարելի բացատրել։ Ֆուկովսկու ծնունդի հետ կապուած հանգամանքները ոչ ինքն էր մոռացել, ոչ էլ ուրիշները։ «Իր դիքը հասարակութեան մէջ,—ասում է բանաստեղծի բարեկամներից մէկը և դէպի Բունին ընտանիքն ունեցած վերաբերմունքը ծանը ազդում էին նրա հոգու վրայ. . . Նրա մայրը, որքան էլ սիրուած լինէր ընտանիքում, այնուամենայնիւ պարտաւոր էր տե-

զից կանգնած լսել պատուէրները»։ բանաստեղծի մտնուկ և պտտանի տարիներն ևս այնքան էլ երջանիկ չեն անցել, ինչ-պէս թուռմ է։ 24 տարեկան հասակում նա տիսրութեամբ է յիշում իր անցեալը։ «Թէ դէպի մանուկ օրերս է թոշում վշտակի հոգիս», ասում է նա «նամակ Փիլալէտին» գլուածքում (1807), «Թէ անցեալի խնդութիւններն եմ հաշում,—հրքան սակաւ են» Ո՞չ. երջանկութիւնն ինձ լինելութեան չի վարժեցրել. || Իմ դալար ծաղիկն անբոյր թառամեց...»։ Մի քիչ ուշ (1810 թ.) ժուկովսկին գրում է Ա. Ի. Տուրգինսկին. «Մի կարծիք որ իմ յայտնած միտքը սիրոյ ներգործութեան մասին, ընդհանուրին յայտնի մի միտք է և ոչ իմ սեփականը. ոչ, իմ ասածն արդարացի և անվիճելի է—միայն՝ այն դէպքում, եթէ ենթադրելու լինես մի քանի առանձնակի պարագաներ. իմ յայտնած միտքն արդարացի է իմ վերաբերմամբ։ Պէտք է ի նկատի առնել իմ հանգամանքներին. դաստիարակութիւնս, ընտանեկան կապերս ու այն երկուսին (հօրն ու մօրը), որոնք այնքան քիչ և միևնոյն ժամանակ այնքան շատ են ներգործել ինձ վրայի։ Նրան ծանր էր գալիս իր մօր կէս-տանտիկնոջ ու կէս աղախնի պէս մի բան լինելը։ Հօրը ժուկովսկին համարեա չէր ճանաչում և երբէք չէր խօսում նրա մասին։

Պանսիոնի լրջանին է վերաբերում և նրա առաջին թարգմանութիւնը—կոցերուի Շերեխան առուակի մօտ» վէպը (1801 թ.): Դասընթացն աւարտելուց յետոյ ժուկովսկին փորձեց ծառայել, բայց չուտով թողեց պաշտոնն ու բնակութիւն հաստատեց գիւղում (Միշենսկու), իր կրթութիւնը շարունակելուն պատակով։ Մուկուայից հեռանալիս նա իր հետ մի մեծ գրադարան տարաւ գիւղը, որ կազմուած էր, բացի Փրանսական մեծ հանրագիտարանը, բազմաթիւ պատմական շարադրութիւններից՝ Փրանսերէն, գերմաներէն և անգլիերէն, յոյն ու լատին դասական հեղինակների թարգմանութիւններից, Շիլէրի, Լեսուինզի և Հերդէրի լիակատար հրատարակութիւններից և այլն։ Վկաղիմ նովգորոդցի» վէպիկը, որ գրեց ու լոյս ընծայեց 1803 թ., ցոյց է տալիս, որ այդ ժամանակները ժուկովսկին պարապել է ոռոսաց հին պատմութիւնն ուսումնասիրելով։ Գիւղում վարած կեանքի ընթացքում նա քիչ բան տպեց (1802—1806)։

1802 թ. «Վեստնիկ Եւրոպի» ամսագրում լոյս տեսաւ նրա «գիւղական հանգստարան» ը, որ թարգմանել, կամ աւելի շուտ՝ փոխադրել էր Գրէյից։ Բանաստեղծութիւնը գրաւեց ընդ-

հանուրի ուշադրութիւնը: Նրա պարզութիւնն ու ընականութիւնը  
մի նոր յայտնութիւն էին անդղորդ ու վերասլաց կեղծ-դասա-  
կանութեան շրջանում: Միաժամանակ Կարամզինի «Թշուառ  
Լիզա» ի աղդեցութեան տակ գրեց «Մարիայի անտառը»: 1806  
թ. նա արձագանք տուաւ հասարակութեան ազգասիրական  
արամագրութեանը գրելով իր յայտնի «Գուսանի երգը սլաւ-  
յադթողների դադաղի վրայ»: 1808 թ. լոյս տեսաւ նրա «Լիւդ-  
միլա»: որ մի փոխագրութիւն էր Բիւրգէրի «Լինոր» ի: Այս  
գեղօնի (բալլար) հետ ուստ գրականութեան մէջ մտնում է մի  
բոլորովին նոր բովանդակութիւն—ուսմանտիզմը: Ժուկովս  
կուն գրաւեց ոսմանտիզմի այն կողմը, որ մի ձգտումն է դէ-  
պի միջին դարերի հեռուն, դէպի միջնադարեան զրոյցների և  
աւանդութիւնների վաղուց անհետացած աշխարհը: «Լիւդմիլա»-ի  
յաջողութիւնը ոգեսորեց Ժուկովսկուն: Այդ օրից սկսած թարգ-  
մանութիւններն ու փոխադրութիւնները անընդհատ հետևում  
են իրար: Առաւելապէս թարգմանում է գերման բանաստեղծ-  
ների երկերից, իսկ լաւագոյն թարգմանութիւնները Շիլէրից  
են: Ժուկովսկու այդ ժամանակուայ ինքնուրոյն գործերից են  
«Գրոկօօյ»-ը, «տասներկու քնած կոյսեր» մեծ քերթուածի  
առաջին մասը ու նաև մի քանի արձակ յօդուածները: օրինակ՝  
«ովէ իսկապէս բարի և ճշմարիտ մարդը», «երեք քոյր», «գործը  
հասարակութեան մէջ», Այդ ժամանակներն էր, որ Ժուկովսկին  
«Վեստնիկ Սւրովի» պարբերականի խմբագրողը դարձաւ, որի  
համար էլ անցաւ Մուկուտաւ Խմբագրողի պաշտօնում նա մնաց  
երկու տարի՝ 1809 և 1810 թ. թ. սկզբում ամրող գործը  
միայն իր վրայ էր, յետոյ միացաւ պրօֆ. Կաչենովսկին, որին  
և ամսագիրը մնաց վերջը: Դրանից յետոյ Ժուկովսկին անցաւ  
գիւղ, որտեղ և սրտի ծանր դրամա ունեցաւ: Այդ դէպքից մի  
քանի տարի առաջ նա պարապել սկսեց իր խորթ քրոջ երկու  
աղջիկների հետ: Սրանց մայրը՝ Սկատերինա Աֆանասևնա Պրո-  
տասովան, որ Բունինի կրտսեր աղջիկն էր, նոր էր այրիացել  
և բնակութիւն հաստատել Բելկում: Բանաստեղծը ջերմագին  
սիրեց իր աւագ աշակերտուհուն՝ Մարիա Պրոտասովյային: Ա-  
նուրջները փոխադարձ սիրոյ և երջանիկ ընտանեկան կեանքի  
մասին դառնում են նրա բանաստեղծութեան սիրած մոտիւ-  
ները: Բայց քերթողի զգացմունքը պէտք է շուտով մելամաղ-  
ձիկ գոյներ առներ՝ «Աղջականութեան սերտ կապերն աւելի  
և զօրեղացնում էին զգացմունքը՝ մերձաւոր ազգականի ամ-

բրդջ մօտկութեամբ, ու միենոյն ժամանակ այդ նոյն կապերը անհնարին էին դարձնում սէրն այն մարդկանց աչքում, որոնցից կախուած էր հարցի վճիռը։ Բանաստեղծն ստիպուած էր թագցնել իր սէրը, որ եւք էր գտնում բանաստեղծական զեղմունքի մէջ՝ առանց խանգարելու նրա գրական զբաղմանքներին։ 1810 թ. ից մեզ հասել է մի նամակ, որ գրել է Ժուկովսկին Ա. Ի. Տուրգենևին, և որ ցոյց է տալիս, թէ բանաստեղծը շարունակում էր լրջօրէն պարապել իր ինքնակրթութեամբ։ Առանձին ջանասիրութեամբ նա հիմա պարապած է ոռու և ընդհանուր պատմութիւնը ուսումնասիրելով և լուրջ տեղեկութիւններ է ձեռք բերում գիտութեան այդ ճիւղից։ 1812 թ. Ժուկովսկին Ն. Ա. Պրոտասովայից խնդրեց նրա մեծ աղջկը կնութեան, բայց վճռական մերժում ստացաւ, որ պատճառաբանւում էր ազգակցական կապերով։ Նուտով այդ մերժումից լետոյ նա գնաց Մոսկուա և մտաւ կամաւորների շարքը։ Բանակում, Տարօնտինի մօտ, յափշտակուած ընդհանուր հայրենասիրական ոգևորութեամբ՝ նա գրեց իր հոչակաւոր «Երգիշը ուսու ռազմիկների բանակում» բանաստեղծութիւնը, որ քերթողին միանգամից անհամեմատ աւելի մեծ հոչակ տրւաւ, քան թէ նրա նախորդ ամբողջ գրական գործումնէութիւնը։ Հազարաւոր ձեռագիր օրինակներով բանաստեղծութիւնը տարածուեց զօրքի և Ռուսաստանի մէջ։ Նոյն 1812 թ. է գրուած նաև նրա նշանաւոր «Աւելանա» գեղօնը, որ չնայած իր զուտ ուսւական ներածութեան, նոյնպէս Բիւրգէրի «Լինոր» ի հիմնական մոտիւններն է մշակում։

Ժուկովսկու զինուարական ծառայութիւնը երկար չտևեց։ 1812 թ. վերջին տիֆով հիւանդացաւ և 1813 թ. յունուարին թողեց պաշտօնը։ Գիւղ գալուց յետոյ նա մի անդամ էլ փորձնեց մեղմացնել Յ. Ա. Պրոտասովայի սիրտը, բայց ապարդիւն Մինչդեռ Մարիա Պրոտասովան ըստ երևութին նոյնպէս սիրում էր Ժուկովսկուն։ Մօր խիստ մերժումները հզօրապէս ներագործում էին նրա վրայ և խանգարում առողջութիւնը, որ առանց այն էլ բաւական թոյլ էր։ Աւելի վատ տառապում էր Ժուկովսկին։ Նրա յիշատակարանը մասամբ մեր առաջն է դընում նրա հոգու տառապանքները։ Սակայն շուտով նրա սէրը ինչ որ միստիք երկրպագութեան ընոյթ առաւ։ Խոկ աւելի ուշ մրցելով արգելքների դէմ, որոնց քերթողը չէր կարող ու չէր էլ ուզում ուժով խորտակել—նրա սէրն աւելի ու աւելի պլա-

տոնական է դառնում: «Միթէ ես ու Մաշան միւնոյն երկրի վրայ չենք». գրում է նա 1814 թ.: Միթէ չենք կարող ապրել միմեանց համար և միշտ մէկ մէկու ի նկատի ունենալ: Մի տուն—թէ մի աշխարհ, մի յարկ—թէ մի երկնք: Միւնոյն չէ...».

«Թուղթ Ալէքսանդր կայսրին» զրութիւնը 1814 թ. ընդ միշտ որոշեց Ժուլիովսկու վիճակը: Մարիա Ֆէոդորովնա կայսրուհին ցանկութիւն յայտնեց, որ բանաստեղծը գայ Պետերը բուրգ: Հեռանալուց առաջ, ըստ երկութին արդէն լիովին հաշտուած իր բաղդի հետ՝ (դրանից քիչ առաջ նա միանգամ էլ խօսեց աղջկայ մօր հետ, բայց նորից անյաջող) Ժուլիովսկու զրում էր իր «մտերին Մաշային». «Չեմ մոռանայ երբէք, որ կեանքում ունեցած երջանկութեանս համար ամբողջովին քեզ եմ պարտական, որ դու ես ինձ տուել լաւագոյն դիտաւորութիւններս, որ ամեն լաւ բան, որ մէջս ունիմ՝ կապուած է առ քեզ ունեցած սիրակցութեանս հետ և որ վերջապէս կրկին քեզ եմ պարտական հոգուու ամենասիրուն շարժումի համար, որը վճռեց քեզնից զրկուելու զոհաքերութիւնը յանձն առնել... Մաքերովս ու զգացմունքներովս միշտ կաշխատեմ քեզ արժանի լինել! Ամեն ինչ կեանքում—մի միջոց է դէպի գեղեցիկը! 1817 թ. Մարիա Պրոտասովան մարդու գնաց պրօֆ. Մայերին: Սիրոյ, տիսուր ու մելամաղձիկ սիրոյ անուրջները գեռ երկար ժամանակ շարունակում են հնչել Ժուլիովսկու բանաստեղծութիւնների մէջ: Նրա սէրն էլ մասսամբ նոյն վիճակն ունեցաւ, ինչ որ Դանտէի սէրը, ինչպէս Բէտարիչէն Փլորէնտացի աղջիկ լինելով կամաց-կամաց էակերտուեց ու դարձաւ կաթոլիկ աստուածաբանութեան բարձր մարմնացում, այնպէս էլ Ժուլիովսկու սրտի սիրելին նրա համար դարձաւ խորհրդանշան ամեն բարձր ու իդէալական բանի: Մարիայի մահից յետոյ (1828 թ.) Ժուլիովսկին գրում է նրա մօրը, «նրա գերեզմանը—մեր հաւատի սեղանն է... նրա մասին մտածելը—կրօն... Հիմա գիտեմ, թէ ինչ է մահը, բայց անմահութիւնն աւելի հասկանալի դարձաւ: Երջանկութեան համար չէ կեանքը. կեանքը—հոգու համար է. հետեաբար Մաշան չի կորած: Ո՞վ կարող է նրան հոգուցը խլել: Այսուեղ Մաշային կարելի էր աչքով տեսնել ու ականջով լսել,—բայց այնտեղի մաշային կարելի է տեսնել միայն նրան արժանի հոգովք:

«Թախիծն անյայոի, ձգտումը հեռուն, կարօտը սիրոյ և անձուկը բաժանման, Ժուլիովսկու բանաստեղծութեան էական

Հայնախազերը մնացին։ Այդ բանաստեղծութեան ընոյթը համարեա բացառապէս քերթողի միատիք-իդէալական տրամադրութիւնից էր կախուած, որ իր հերթին արդիւնք էր երջանիկ սիրոյ մասին ունեցած չիրականացած երազների։ Ժամանակի հանգամանքները, այն զգայնոտ-մելամազձիկ գրական ճաշակները, որ ոռւ հասարակութեան մէջ զարգացան այդ ժամանակները, — իսկստ յարմար եկան բանաստեղծի սուբեկտիւ, անձնական զգացմունքին։ Մացնելով իր բանաստեղծութեան մէջ ոռմանտիկ բովանդակութիւն, նա մի խոշոր շափով լայնացրեց այն զգայնոտ (սենտիմենտալ) ուղղութիւնը, որ նրա երևալուց առաջ արդէն համատառել էր ոռւ գրականութեան մէջ, բայց արծարծելով ոռմանտիկ մոտիւներ, նա ամենից շատ կրկին իր զգացմունքի ցուցմունքին էր հետեւում։ Միջնադարեան ոռմանտիկի բովանդակութեան միջից նա միայն այն էր առնում, ինչ համապատասխան էր իր սեփական միատիք-իդէալական ձգտումներին և անուրջներին։ Հէնց այդ է ժուկովսկու նշանակութիւնը, որ նրա բանաստեղծութիւնը լինելով սուբեկտիւ, միւնոյն ժամանակ ծառայում էր ոռւսի մտաւոր զարգացման ընդհանուր շահերին։ Նրա սուբեկտիւթիւնը մի կարևոր քայլ էր այն ճամփի վրայ, որ նեռացնում էր ոռւ գրականութեան կեղծ-դաստիկանութեան ցրտից Ռուս գրականութեան մէջ նրա բանաստեղծութիւնը մտցրեց ներքին կեանիքի աշխարհը, որ մինչև նրա երևալը համարեա անյայտ էր այնտեղ։ Նա արծարծում էր մարդկայնութեան գաղափարները և իր անկեղծ ու սրտաբուլի զգացմունքով բարձրանում էր բարոյական պահանջների և իդէալների մակերնոյթ։

Ժուկովսկու բանաստեղծութեան ընդհանուր բնաւորութիւնն արտայայտուեց նրա գրական գործունէութեան առաջին շրջանում։ 1815—16 թուերին և նրանից յետոյ բանաստեղծի ինքնուրոյն սաեղծագործութեան աղբիւրը համարեա ցամաքում է և այնուետև ոռւ գրականութեան վրայ նա ներգործում է կարելի է ասել բացառապէս իր թարգմանութիւններով, որոնք ոռւ գրականութեան պատմութեան խոշորագոյն դէպքերից են։ Բացի իրանց ձևի բարձր կատարելութիւնը, փափուկ, սահուն ու գեղանի տողերը՝ այդ թարգմանութիւնները կարևոր են նրանով, որ ոռւ ընթերցողին ծանօթացրին եւրոպական գրական ստեղծագործութեան լաւագոյն երեսըների հետ։ «Ժուկովսկու չորհիւ», ասում էր Բէլինսկին, «զերմանական բա-

Նաստեղծութիւնը ընտանի է մեզ։ Այն ժամանակուայ համար դա մի վեհ խնդիր էր, որ ոռւս ընթեցողի աջին բաց էր անում բոլորովին նոր ու լայն հորիզոններ։ 1817—1841 թ. թ. կազմում են Ժուկովսկու պալատական կեանքի շրջանը՝ սկզբում որպէս ոռւս լեզուի դասաւու Ալեքսանդրա Ֆէոդորովնա և Սլենա Պավոլինա Մեծ իշխանուհիների, իսկ 1825 թ. օկտաձ որպէս Բագաժառանդ Ալեքսանդր Նիկոլաևիչ (յետոյ Ալեքսանդր Ա դաստիարակի)։ Այդ շրջանին է վերաբերում Ժուկովսկու յաճախակի արտասահման գնալը թէ իր պաշտօնի պատճառով և թէ բժշկուելու։ Նրա բանաստեղծական երգերն այս շրջանում կարծես պատահմամբ են երևում։ Այսպէս օրինակ 1820 թ. Գերմանիայում և Գուիցերիայում ճամբորդելիս Բերլինում նա ձեռնարկեց Շիլէրի «Օրլէանի կոյսը» թարգմանելուն, որ և վերջացրեց 1801 թ. վերջին մօտ։ Զուիցերիայում Շիլեօնի ամրոցը տեսնելու կենդանի տալաւորութեան տակ նա թարգմանում է Բայրոնի «Շիլեօնի կալանաւորը» (1822 թ.)։ Նոյն ժամանակուայ դործ են Մուրի «Փէրի և հրեշտակի» և մի քանի ուրիշ կտորների թարգմանութիւնը։ 1828—29 թուերին ունեցած ծանր կորուսաները՝ Մարիա Ֆէոդորովնա կայսերունու և իր մտերիմ Ա. Օ. Վոյեկովի մահը առիթ են դառնում Շիլէրի «Պոլիկատի մատանին» և «Յերերայի գանգատը» գեղօնների թարգմանութեան։ Պուշկինի ազգեցութեան տակ Ժուկովսկին գրում է իր «Բնած թագուհին», «Մկների» և գորտերի պատերազմը, և «Բերենդէյը թագաւորի հերիաթը» (1831)։ 1832—3 թ. թ. ձմեռը Ժուկովսկին ապրեց Ժընեի լճի ափին։ այդ ժամանակն է արել մի շարք թարգմանութիւններ Ռւլանդից, Շիլէրից, Հերդէրից, Խլիականից (հատուածներ) և շարունակել Լամոտտ-Փուկէի «Ունդինայի» թարգմանութիւնը, որ սկսել էր գեռ 1817 թ. և բոլորովին վերջացրեց միայն 1836-ին։ Հետեւեալ տարին նա թագաժառանդի հետ ճամբորդեց Ռուսաստանում և Սիրիի մի մասում, իսկ միւս երկու տարին՝ 1838—39 թ. թ. նոյնպէս թագաժառանդի հետ նա անցկացրեց ճամբորդելով Աւրոպայում։ Հոգումում առանձնապէս մտերմացաւ Գոգովի հետ։ այս հանգամանքն ըստ երկութիւն անհետեանք չմնաց այն միատիք տրամադրութեան զարգացման համար, որ առաջ եկաւ Ժուկովսկու կեանքի վերջին շրջանում։

1841 թ. գարնանը Ժուկովսկու մանկավարժական պարագամունքները վերջացան։ Թագաժառանդի վրայ նա բարերար

ազդեցութիւն ունեցաւ: Դեռ 1817 թ. ողջունելով Ալէքսանդրա Ֆէոդորովնա կայսրուհուն նուիրած մի ուղերձով իր ապագայ սանի ծնունդը, բանաստեղծը ցանկութիւն էր յայտնում:

Եւ բարձր դիրքում թող չմոռանայ  
Ամենասուրբը կոչումներից՝ մարդ:

Այս ճշմարիտ մարդասէր ուղղութեամբ ժուկովսկին դաստիարակեց թագաժառանգին: 1841 թ. Ալլիկի 21-ին Դիւստիլդորֆում կատարուեց ծ8 տարեկան բանաստեղծի և իր վաղուցուայքարեկամ նկարիչ Ռէյդերնի 18 տարեկան աղջկայ հարսանիքը: Վերջին 12 տարին նա ապրում էր Գերմանիայում, իւր նոր ազգականների շրջանում առաջ Դիւստիլդորֆում, յետոյ՝ աւելի ուշ Մայնի վրայի Ֆրանկֆուրտում և համարեա ամեն տարի պատրաստում էր գալ Ռուսաստան, բայց կնոջ հիւանդութեան պատճառով մինչև վերջն էլ չկարողացաւ իրագործել այդ ցանկութիւնը: Ամուսնութեան առաջին տարին գրել է հետևեալ հէքիաթները. «Իւան թագաւորը և մոխրագոյն գայլը», «Կատուն կօշիկներում», «Տիւպան ծառը»: 1842 թ. նա վերջացրեց «Նալ և Դամաեանտի» քերթուածի թարգմանութիւնը, որ սկսել էր մի տարի առաջ Ռուկկերտի և Բոպպի գերմաններէն թարգմանութիւնից և ձեռնարկում է «Ռոդիսականին», որի առաջին հատորը լոյս տեսաւ 1848-ին, իսկ երկրորդը 1849-ին, Համարեա միաժամանակ նույնուի հանեց և մի ուրիշ ընդարձակ գործ՝ «Ռուսատէմ և Զոհրաբի» թարգմանութիւնը (1848 թ.): Դեռ վաղուց ժուկովսկին սկսել էր մի քերթուած, որի ստեղծալորդութեան համար նա շարունակ ու փութաշան ընթերցանութեամբ էր պարապած: Քերթուածի անունը «Թափառական հրէայ» էր: Այդ միաքն առաջին անգամ նա յղացաւ 1831 թ. 40-ական թուերի վերջին նա գրեց սկզբի երկսուն տողը ու մէկ էլ նորից ձեռք առաւ մահից մի տարի առաջ. բայց համարեա բոլորովին կուրացած բանաստեղծին չէր վիճակուած վերջացնել այդ գործը: Նա մեռաւ Բաղէն բաղէնում 1852 թ. ապրիլի 7-ին, թողնելով կնոջը, մի տղայ և մի աղջկի: Մարմինը բերին Պետերբուրգ և մեծ պատուով յանձննեցին հողին Ալէքսանդր Նեսացու մայրափանքում Կարամզինի մօտ: 1883 թ. Ռուսաստանում ամեն անդ տօնեցին նրա ծննդեան 100ամեակը, իսկ 1887 թ. քաղաքային խորհուրդը Պետերբուրգում Ալէքսանդրեան այգու մէջ մի միջակ կիսարձան դրեց բրոնզից:

Թարգմ. Ն. Ա.